ԷԴԳԱՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի հատկապես կարևոր գործերով քննիչ

ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ԲՌՆԻ ՍԵՌԱԿԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԲՅԵԿՏԸ

Հանցակազմի ուսումնասիրության համար կարևորագույն նշանակություն ունի դրա օբյեկտի բովանդակության պարզաբանումը: Այն անհրաժեշտ է հանցավոր ոտնձգության հանրային վտանգավորության բնույթը և աստիճանը պարզելու համար: Հանցակազմի յուրաքանչյուր հատկանիշի, այդ թվում նաև օբյեկտի մանրակրկիտ ուսումնասիրությամբ է հնարավոր ճիշտ որակել արարքը:

Անչափահասների դեմ ուղղված բռնի սեռական հանցագործությունների օբյեկտի հիմնահարցը եղել և մնում է քրեական իրավունքի տեսության առավել վիճելի հարցերից մեկը: Այդ հիմնահարցի վերաբերյալ կարծիքները բազմազան են: Սույն հոդվածում վերլուծվել են անչափահասների դեմ ուղղված բռնի սեռական հանցագործությունների օբյեկտի վերաբերյալ մի շարք գիտական մեկնաբանություններ, ինչպես նաև կատարված հետազոտության վրա առաջարկվել է ՀՀ քրեական օրենսգրքում ներառել «Երեխաների դեմ ուղղված սեռական հանցագործություններ» առանձին գլուխը:

Հիմնաբառեր *- անչափահասների դեմ ուղղված բռնի սեռական հանցագործություններ, հանցագործության օբյեկտ, ինտեգրացված օբյեկտ, հասարակական հարաբերություններ, բնականոն զարգացում, երեխաների նորմալ սեռական, ֆիզիկական և հոգևոր զարգացում, առողջ սեռական հասունացում, մանկահասակների և անչափահասների բարոյական և ֆիզիկական առողջություն, սեռական ազատություն և անձեռնմխելիություն:*

Յուրաքանչյուր հանցագործություն ոտնձգում է քրեաիրավական պաշտպանության ներքո գտնվող որևէ օբյեկտի դեմ, որն էլ կանխորոշում է տվյալ հանցավոր արարքի բնույթը: Հանցագործության օբյեկտը կարևոր նշանակություն ունի կոնկրետ հանցակազմի կառուցման, վերջինիս սոցիալական բովանդակության բացահայտման և հանրային վտանգավորության աստիճանը որոշելու համար: Հանցագործության օբյեկտը պայմանավորում է հանցավոր արարքի՝ հասարակական կարևորություն ունեցող բովանդակությունը, ինչպես նաև հաշվի է առնվում հանցակազմի այլ տարրերը բնութագրելիս: Այս առումով, հանցագործության օբյեկտը կանխորոշում է քրեաիրավական արգելքի բնույթը, օրենքով արգելված արարքների շրջանակը, վերջիններիս հանրային վտանգավորության բնույթն ու աստիճանը[1]: Հանցագործության օբյեկտն առավել համապարփակ և ամբողջական ցույց է տալիս հանցավոր դելիկտների սոցիալ-իրավական էությունը և ամենևին պատահական չէ այն հանգամանքը, որ ցանկացած հանցագործության իրավական վերլուծություն առաջին հերթին ենթադրում է դրա օբյեկտի ուսումնասիրությունը[2]: Ասվածն առավել քան արդիական է անչափահասների դեմ ուղղված սեռական հանցագործությունների առումով, քանզի այս դեպքում վնասվում կամ վտանգվում են քրեաիրավական պաշտպանության ներքո գտնվող առավել կարևոր և խոցելի հասարակական հարաբերությունները:

Քրեական իրավունքի տեսության մեջ համընդհանուր ճանաչում է ստացել այն կարծիքը, համաձայն որի՝ հանցագործության օբյեկտ են համարվում հասարակական հարաբերությունները: Ընդ որում, հանցագործության օբյեկտ են այն հասարակական հարաբերությունները, որոնց դեմ ուղղվում և որոնց վնաս են հասցնում հանցագործությունները[3]:

Ա.Ն. Տրայնինը նշում էր, որ անհրաժեշտ է, ամենայն հստակությամբ, փաստել, որ ցանկացած հանցագործության օբյեկտը հասարակական հարաբերություններն են[4]: Պրոֆ. Պ.Ա. Ֆրոլովը զարգացնելով վերոնշյալ միտքը նշում էր, որ հանցագործության էությունը, դրա բարձր հանրային վտանգավորությունը պետք է փնտրել ոչ թե պատճառված վնասի չափերի, այլ հասարակական հարաբերություններին պատճառված վնասի մեջ, այլ կերպ ասած՝ հանցագործության էությունը հասարակական հարաբերությունների խաթարումն է[5]:

Հասարակական հարաբերությունները ծագում և ծավալվում են որոշակի սոցիալական արժեքների կապակցությամբ: Օրենքը կարգավորում և պաշտպանում է այն հասարակական հարաբերությունները, որոնք նպաստավոր պայմաններ են ստեղծում հասարակության և պետության զարգացման

www.journal.lawinstitute.am

համար, բխում են վերջիններիս շահերից, արտացոլում են հասարակության պահանջմունքները: Նման հասարակական հարաբերությունները կարգավորվում և պաշտպանվում են իրավունքի տարբեր ճյուղերի կողմից, բայց դրանց դեմ կատարվող առավել վտանգավոր ոտնձգություններից (հանցագործություններից) պաշտպանությունն իրականացնում է քրեական իրավունքը: Փաստորեն, քրեական իրավունքը (քրեական օրենքը) պաշտպանում է իրավունքի այլ ճյուղերի կողմից կարգավորվող հասարակական հարաբերությունները[6]:

Քրեաիրավական դոկտրինայում կարծիք է արտահայտվել առ այն, որ հանցագործության օբյեկտը ոչ թե վերացական հասարակական հարաբերություններն են, այլ կոնկրետ բարիքները և շահերը[7]: Կան նաև այսպես կոչված «կոմպրոմիսային» կամ «հաշտեցնող» տեսություններ[8], համաձայն որոնց՝ հանցագործության օբյեկտը քրեաիրավական պաշտպանության ներքո գտնվող հասարակական հարաբերություններն են և հանրային բարիքներն ու շահերը, որոնց վնաս է պատճառվում հանցանքի կատարմամբ[9]:

Որպես կանոն, այս տեսության կողմնակիցները չեն հիմնավորում հանցագործության օբյեկտի նման բնորոշումը և հստակորեն չեն սահմանազատում հասարակական հարաբերությունների և հանրային բարիքի կամ հանրային շահերի տարբերություններն ու առանձնահատկությունները, չեն նշում այն տիպական իրավիճակները, թե ե՞րբ է վնասը պատճառվում հասարակական հարաբերություններին, իսկ երբ՝ հանրային շահերին կամ բարիքներին: Բնականաբար, այս անորոշությունն անթույլատրելի է:

Վ.Ս. Պրոխորովը նշում է, որ հանցագործության օբյեկտը պետք է օժտված լինի ընդհանուր միասնական այնպիսի հատկանիշով, որը թույլ կտա իր մեջ ներառել թե՛ հանցագործության արդյունքում նվաստացած մարդու վիշտը, թե՛ գողացված թոշակը և թե՛ պետության ինքնիշխանությունը և այլն: Նման միասնական հատկանիշով, ըստ նրա, օժտված են բացառապես հասարակական հարաբերությունները, որոնք ծագում և զարգանում են մարդկային կենսագործունեության զանազան ոլորտներում[10]:

Հարկ է նկատել, որ հանցագործության օբյեկտի վերաբերյալ դասական մոտեցումները գնալով ավելի ու ավելի շատ են ենթարկվում քննադատության: Այս առումով հետաքրքրական է քննարկել Գ.Պ. Նովոսյոլովի տեսակետը, ով գտնում է, որ հանցագործության օբյեկտը ոչ թե վերացական հասկացություն է, մտացածին կատեգորիա, այլ շատ հստակ և որոշակի. որպես հանցագործության օբյեկտ պետք է համարել այն, ինչ հակադրվում է կամ խանգարում է մարդուն իր գործունեության ընթացքում[11]: Բնականաբար, նման դեֆինիցիան բավարար չէ հանցագործության օբյեկտի սահմանման համար և վերջինս բերում է մի շարք փաստարկներ: Նախ՝ Նովոսյոլովը նշում է, որ հանցագործությունը վնաս է պատճառում կամ վտանգ է սպառնում ոչ թե ինչ որ բանի, այլ ինչ որ մեկի: Այն ուղղված չէ վերացական կատեգորիայի (հասարակական հարաբերությունների, հանրային շահի, իրավական բարիքի և այլն) դեմ, այլ վնասում է կոնկրետ մարդուն կամ մարդկանց խմբին, հասարակությանը: Բացի այդ, որպես ոտնձգության օբյեկտ կարող է հանդես գալ ցանկացած անձ, անկախ տարիքից, առողջական վիճակից, հանրային կյանքին մասնակցության աստիճանից: Նշվում է նաև, որ ցանկացած հանցագործության (ոչ միայն անձի դեմ ուղղված) օբյեկտ հանդիսանում է մարդը, մի դեպքում որպես անհատ, մեկ այլ դեպքում որպես անձանց միավորում որպես իրավաբանական անձ կամ այլ կազմակերպություն, հանրություն և այլն: Ընդհանրացնելով նշվում է, որ հանցանքը կատարվում է ոչ թե «ինչի», այլ «ում» դեմ և, հետևաբար, բոլոր դեպքերում հանցագործության օբյեկտ է համարվում մարդը[12]:

Չնայած առաջարկված տեսակների առաջադիմական բնույթին և հումանիստական գաղափարական հենքին, մեր կարծիքով, առավել նպատակահարմար է որպես հանցագործության օբյեկտ դիտարկել հասարակական հարաբերությունները: Հաճախ դժվար է պարզել այն անձին կամ անձանց շրջանակը, ում վնաս է պատճառվել հանցագործության արդյունքում: Բացի այս Գ.Պ. Նովոսյոլովի առաջարկած հանցագործության օբյեկտի կառուցվածքում ի չիք է դառնում «հասարակությունը»: Նրա կարծիքով, օբյեկտը նա է, ում դեմ ուղղված է հանցագործությունը, այսինքն կոնկրետ անհատը, իրեն պատկանող նյութական և ոչ նյութական բարիքներով: Օբյեկտի նման բնորոշման պարագայում հասարակության փոխարեն ստանում ենք մարդկանց քառտիկ ամբողջություն, որոնցից յուրաքանչյուրը միայնակ է մնում իրեն պատկանող արժեքների և դրանց դեմ ոտնձգող հանցագործի հետ:

Իրավաբանական գրականության մեջ հանցագործության օբեկտը դասակարգվում է չորս տեսակների՝ ընդհանուր, սեռային, տեսակային և անմիջական[13]:

Հարկ է նկատել, որ հանցագործության օբյեկտի քառանդամ կառուցվածքը ոչ միշտ է ընդունվել

տեսական մակարդակով: Երկար տարիներ խորհրդային քրեաիրավական դոկտրինայում առանձնացվել և գիտականորեն հիմնավորվել է հանցագործության օբյեկտի եռանդամ կառուցվածքը՝ ընդհանուր, հատուկ և անմիջական[14]: Այնուհետև խոսվում էր ընդհանուր, սեռային և անմիջական օբյեկտի մասին: Այս դասակարգումը համահունչ էր մարքսիստ-լենինիստական գաղափարախոսության այն դրույթին, համաձայն որի՝ ցանկացած գոյ ունի եռաբնույթ կառուցվածք՝ ընդհանուր, հատուկ և մասնավոր[15]: Սակայն, քրեական օրենսգրքում ավանդական գլուխներից բացի բաժինների նախատեսումը ստիպեց քրեական իրավունքի տեսությանը նոր լույսի ներքո քննարկել հանցագործության օբյեկտը և նախատեսել դրա քառանդամ կառուցվածքը: Յու. Ի. Լյապունովը առաջարկում է բացի օբյեկտի ավանդական չորս տարրերից առանձնացնել նաև հինգերորդը, որը նա կոչում է «ինտեգրացված» օբյեկտ: Ըստ նրա՝ օբյեկտի այս տեսակը վերխմբային է և կոչված է ապահովելու ընդհանուր և սեռային օբյեկտների միջև առկա կապը և միասնությունը[16]: Հանցագործության օբյեկտի հնգանդամ կառուցվածքը առավել հստակ նկարագրում են Ա. Ի. Բոյկոն և Լ. Ի. Ռոդնինան: Վերջիններս բացի հանցագործության ընդհանուր օբյեկտից առանձնացնում են ինտեգրացված օբյեկտը, որի հիման վրա քրեական օրենսգիրքը բաժանվում է բաժինների, սեռային օբյեկտը, որի հիման վրա քրեական օրենսգիրքը բաժանվում է գլուխների, տեսակային օբյեկտը, որի հիման վրա առանձնացվում են հոդվածները և անմիջական օբյեկտը՝ այն կոնկրետ հասարակական հարաբերությունը, որը խախտվել է կոնկրետ հանցանքի կատարմամբ[17]:

Հանցագործության օբյեկտի հնգանդամ կառուցվածքը, տեսական իմաստով, մեր կողմից ավելի ընդունելի է, քանզի թույլ է տալիս առավել խոր և համակողմանիորեն ուսումնասիրել խախտված հասարակական հարաբերության բոլոր տարրերը:

Այսպիսով՝ կարելի է փաստել, որ անչափահասների դեմ ուղղված բռնի սեռական հանցագործությունների ինտեգրացված օբյեկտը մարդու պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերություններն են, սեռային օբյեկտը՝ սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերությունները, տեսակային օբյեկտը՝ այն հասարակական հարաբերություններն են, որոնք խախտվում են ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված անչափահասների դեմ ուղղված բռնի, սեռական հանցագործությունների կատարմամբ, իսկ անմիջական օբյեկտը առանձին հանցագործության զոհ դարձած կոնկրետ անչափահասի (անչափահասների) բնականոն սեռական զարգացման, սեռական անձեռնմխելիության կամ սեռական ազատության պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերություններն են:

Քրեաիրավական տեսության մեջ սեռական հանցագործությունները առանձնացվում են որպես բազմօբյեկտ հանցագործություններ: Որպես քննարկվող հանցագործությունների օբյեկտ դիտարկվում են կոնկրետ հասարակությանը բնորոշ բնականոն սեռական հարաբերությունների համակարգը, սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունները, անչափահասների բնականոն սեռական զարգացման ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունները և այլն[18]:

Ընդ որում, քրեաիրավական դոկտրինայում այս առումով առկա է համեմատական միակարծություն: Խնդրո առարկային նվիրված գրեթե բոլոր տեսական հետազոտություններում նշվում է, որ քննարկվող խումբ հանցագործությունների օբյեկտ, բացի սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերություններից պետք է համարել նաև անչափահասների բնականոն սեռական հասունացման, ֆիզիկական և հոգեկան առողջության պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերությունները:

Տ.Վ. Կոնդրաշովան նշում է, որ մեծահասակների և անչափահասների դեմ ուղղված սեռական հանցագործությունների պարագայում որպես հանցագործության օբյեկտ պետք է դիտարկել տվյալ հասարակությանը բնորոշ սեռական հարաբերությունների համակարգի տարբեր տարրեր[19]:

Ակնհայտ է, որ քննարկվող հանցագործությունների սեռային օբյեկտն իր մեջ ներառում է բնույթով միմյանցից տարբերվող տեսակային օբյեկտներ և այս պարագայում անխուսափելիորեն ծագում են մի շարք խնդիրներ՝ կապված քննարկվող տեսակային օբյեկտների համադրման, դրանց միջև փոխադարձ կապի, հիերարխիայի և ենթակայության առումով:

Մասնագետների ուշադրությունը հիմնականում կենտրոնանում է սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության հասկացությունների տարբերակման վրա:

Վ.Պ. Կոնյախինը նշում է. «...սեռական ազատությունը 16 տարին լրացած մարդու իրավունքն է ինքնուրույն ընտրելու իր սեռական զուգընկերոջը և

սեռական պահանջմունքների բավարարման եղանակները»: Այստեղ գործում է տվյալ անձի հետ վերջինիս կամքին հակառակ սեռական կապի մեջ մտնելու արգելքը: Ավելի ցածր տարիքային խմբի համար (16 տարեկանից ցածր) սահմանված է սեռական անձեռնմխելիության իրավունքը, ինչը ենթադրում է վերջիններիս հետ սեռական հարաբերություն ունենալու կամ ցանկացած բնույթի սեռական կապի մեջ մտնելու կամ սեռական բնույթի որևէ գործողություն կատարելու իրավական արգելք[20]: Այս առումով Ա. Ն. Իգնատովը նշում է, որ, եթե չափահաս կնոջ բռնաբարության դեպքում հանցագործության օբյեկտ պետք է համարել անձի սեռական ազատության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունները, (ինչը ենթադրում է առկա հասարակական հարաբերությունների համակարգում այլ անձանց հետ սեռական հարաբերությունների մեջ մտնելու անձի իրավունքը), ապա անչափահասի բռնաբարության դեպքում՝ հանագործության օբյեկտը անչափահասի սեռական անձեռնմխելիության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններն են (ինչը ենթադրում է այլ անձի հետ սեռական կապի մեջ մտնելու օրենքով սահմանված արգելք)[21]:

Այս առումով հարկ է փաստել, որ անչափահասների սեռական անձեռնմխելիության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունների քրեաիրավական պաշտպանությունը կարևոր նախահիմք է հանդիսանում չափահասների սեռական ազատության իրավունքի հետագա ապահովման համար: Սակայն, քրեաիրավական պաշտպանության այս երկու օբյեկտները, մեր կարծիքով, ոչ թե ստորադասվում են միմյանց, այլ՝ փոխլրացնում:

Պետք է նշել նաև, որ սեռական հանցագործությունների դասակարգման միասնական չափանիշ առանձնացնելը խրթին է և մինչ այժմ քրեաիրավական տեսության մեջ նման հստակ չափանիշ առանձնացված չէ: Դրա հիմնական պատճառներն են՝ սեռական հանցագործությունների բազմօբյեկտությունը, դրանց օբյեկտիվ կողմի առանձնահատկությունները, այս հանցատեսակներից տուժողների առանձնահատկությունները և այլն: Այս լույսի ներքո անչափահասների դեմ ուղղված բռնի սեռական հանցագործությունների ուսումնասիրությունը հույժ կարևոր է:

Անչափահասների (երեխաների) դեմ ուղղված բռնի սեռական հանցագործությունների օբյեկտի որոշման հիմնախնդիրը բավականաչափ երկար ժամանակահատվածի ընթացքում գտնվում է տեսաբանների ուշադրության կենտրոնում: Սա ամենևին պատահական չէ, քանզի հանցագործության օբյեկտի հստակ սահմանումը այն կարևորագույն գործոնն է, որը թույլ է տալիս օրենսդրին որոշել քրեաիրավական պաշտպանության առաջնահերթությունները և վերջին հաշվով ձևավորել քրեաիրավական քաղաքականությունը: Հենց հանցագործության օբյեկտի սոցիալական արժեքն է պայմանավորում դրա դեմ ուղղված հանցագործության վտանգավորությունը: Բացի այդ՝ հանցագործության օբյեկտի առանձնահատկություններով է որոշվում այս կամ այն նորմի տեղը և դերը քրեական իրավունքի ընդհանուր համակարգում: Այս է պատճառը, որ յուրաքանչյուր հանցագործության օբյեկտին առնչվող հիմնախնդիրները ցայսօր վիճահարույց են քրեական իրավունքի տեսության մեջ և երբեմն դառնում են տեսաբանների միջև թեժ բանավեճերի առարկա:

Որպես անչափահասների դեմ ուղղված բռնի սեռական հանցագործությունների օբյեկտ քրեաիրավական տեսության մեջ առանձնացվում են՝ անչափահասների սեռական անձեռնմխելիությունը[22], նրանց բնականոն զարգացումը[23], երեխաների նորմալ սեռական, ֆիզիկական և հոգևոր զարգացումը[24], անչափահաս անձանց սեռական անձեռնմխելիությունը և բնականոն զարգացումը[25], առողջ սեռական հասունացումը[26], չափահաս տարիքի չհասած անձանց սեռական անձեռնմխելիությունը և բնականոն սեռական զարգացումը[27], անչափահասների առողջությունը և նորմալ զարգացումը[28], անչափահասների ֆիզիկական և հոգևոր նորմալ զարգացումը[29], մանկահասակների և անչափահասների բարոյական և ֆիզիկական առողջությունը, սեռական ազատությունը և անձեռնմխելիությունը[30], պատանիների սեռական անձեռնմխելիությունը և նրանց անձի բնականոն բարոյական և ֆիզիկական ձևավորումը[31], անչափահաս անձանց սեռական անձեռնմխելիությունը և նրանց մտավոր, ֆիզիկական և բարոյական զարգացման ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունները[32]:

Ինչպես տեսնում ենք՝ խնդրո առարկայի վերաբերյալ առկա է կարծիքների բազմազանություն: Փորձենք քննարկել և վերլուծել առավել ուշագրավ մոտեցումները:

Գրեթե բոլոր տեսաբանները, որպես անչափահասների դեմ ուղղված սեռական հանցագործությունների օբյեկտ առանձնացնում են անչափահասների սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերությունները: Մասնավորապես՝ Ա.Վ. Կորնեևան նշում է, որ հանցագործու-

www.journal.lawinstitute.am

թյունների քննարկվող խմբի տեսակային օբյեկտ է համարվում անձի սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերությունների համակարգը[33]:

Ս. Ի. Նիկուլինը պնդում է, որ չափահասների նկատմամբ կատարվող բոլոր սեռական հանցագործությունների օբյեկտը վերջիններիս սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերություններն են, սակայն անչափահասների և մանկահասակների դեմ ուղղված սեռական հանցագործությունների օբյեկտը բացառապես վերջիններիս սեռական անձեռնմխելիության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններն են[34]:

Մեր կողմից այս տեսակետն ընդունելի է մասնակի, քանզի բոլոր անչափահասները չեն, որ օժտված են բացառապես սեռական անձեռնմխելիության իրավունքով: Ինչպես ՀՀ, այնպես էլ ՌԴ օրենսդրության վերլուծությունը ցույց է տալիս, որ բացառապես սեռական անձեռնմխելիության իրավունքով են օժտված տասնվեց տարին չլրացած անչափահասները, մինչդեռ անձն անչափահաս կամ երեխա է համարվում մինչև տասնութ տարին լրանալը:

Վ. Պ. Ռևինն առաջարկում է այս հանցատեսակների օբյեկտին տալ ավելի լայն մեկնաբանություն, մասնավորապես՝ որպես այդպիսին դիտարկել անչափահասների և մանկահասակների բարոյական առողջության, սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունները[35]:

Այս լույսի ներքո, կարծում ենք, պետք է առավել հանգամանորեն ուսումնասիրել անչափահասների սեռական անձեռնմխելիության հասկացությունը և դրա վերաբեյալ առկա դոկտրինալ մեկնաբանությունները:

Բառի ծագումնաբանական տեսանկյունից՝ անձեռնմխելի նշանակում է՝

1) ինչին չի կարելի ձեռք տալ, դիպչել,

2) չօգտագործվող, որ չի օգտագործվում՝ չի ծախսվում և պահվում է հատուկ նպատակների կամ դեպքերի համար,

3) անփոփոխելի, անխախտելի,

4) օրենքի պաշտպանությունը՝ հովանավորությունը վայելող[36]:

Իրավագետները «անձեռնմխելիություն» եզրույթը հիմնականում կիրառում են անձի անձեռնմխելիության տեսանկյունից, որպես պետության կողմից ամրագրված և ապահովված իրավունք, զերծ մնալու ցանկացած ոտնձգությունից: Ժամանակակից քրեաիրավական գիտությունը սեռական անձեռնմխելիությունը մեկնաբանում է որպես որոշակի կատեգորիայի անձանց հետ ցանկացած սեռական բնույթի գործողություն կատարելու բացարձակ իրավական արգելք: Այդ անձանց առանձին խումբ են կազմում անչափահասները կամ երեխաները՝ մինչև որոշակի տարիքի հասնելը:

Այստեղից կարելի է եզրակացնել, որ սեռական անձեռնմխելիությունը հանդիսանում է սեռական ազատության անհրաժեշտ և բազային տարր և դրա դեմ կատարված ոտնձգությունը անխուսափելիորեն նաև ոտնձգություն է անձի սեռական ազատության դեմ:

Ա. Խալիկովը բնորոշում է սեռական անձեռնմխելիությունը որպես անձի սեռական ոլորտի բացարձակ անձեռնմխելիություն[37]: Տ.Վ. Կոնդրաշովան նշում է, որ սեռական անձեռնմխելիությունը սեռական ազատություն չունեցող անձի հետ սեռական բնույթի գործողություններ կատարելու բացարձակ բարոյական և իրավական արգելք է, քանզի նշված անձինք զրկված են իրենց դեմ կատարվող սեռական բնույթի գործողությունները և դրանց հետևանքները հասկանալու կարողությունից և չեն կարող ղեկավարել իրենց վարքաքիգծը սեռական ոլորտում[38]:

Ընդհանուր առմամբ, հարկ է փաստել, որ որոշակի խումբ անչափահասների (16 տարին չլրացած) դեմ սեռական ոտնձգությունների դեպքում, անձի սեռական անձեռնմխելիության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունները հանդիսանում են հանցագործության տեսակային օբյեկտ, իսկ անչափահասների ավելի բարձր (16 տարեկանից բարձր) տարիքային խմբի դեմ կատարված սեռական ոտնձգությունների օբյեկտ են համարվում անձի սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունները:

Որոշակի տարիքից սկսած անձը ձեռք է բերում սեռական ազատության իրավունք: ՀՀ քրեական օրենսգրքի մի շարք հոդվածների (141-րդ, 142-րդ) վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ անձը սեռական ազատության իրավունք ձեռք է բերում տասնվեց տարեկանը լրանալուց հետո: Այսինքն երեխան կամ անչափահասը, որոշակի տարիքից հետո կարող է ինքնուրույն որոշել թե ինչպե՞ս և ու՞մ հետ բավարարել իրենց սեռական պահանջմունքները:

Յու.Կ. Սուշենկոն նշում է, որ սեռական ազա-

տությունը անձի հնարավորությունն է թույլ տալու կամ չտալու, որպեսզի այլ անձն իր հետ ունենա սեռական շփում[39], իսկ Պ.Պ. Օսիպովը սեռական ազատության իրավունքը կապում է սեռական ոլորտում այնպիսի վարքագծի դրսևորման ազատության հետ, որը համապատասխանում է անձի կենսաբանական պահանջմունքներին և տվյալ հասարակությունում ընդունված սեռական վարքագծի նորմերին[40]:

Դոկտրինալ մեկնաբանությունների հիման վրա կարելի է եզրակացնել, որ սեռական ազատությունը որոշակի տարիքի հասած և հոգեկան շեղումներ չունեցող անձի հնարավորությունն է առանց հարկադրանքի և բռնության, ինքնուրույն որոշելու այլ անձանց հետ իր սեռական պահանջմունքների բավարարման եղանակները:

Խնդիրն ավելի է բարդանում, երբ փորձում ենք պարզել բռնի սեռական ոտնձգությունների օբյեկտն այն պարագայում, երբ հանցագործությունը կատարվել է անօգնական վիճակում գտնվող տուժողի նկատմամբ: Սովորաբար՝ անձանց քննարկվող խմբի դեմ ուղղված սեռական ոտնձգությունների պարագայում որպես հանցագործության օբյեկտ՝ տեսաբանները նշում են սեռական անձեռնմխելիության պահովմանն ուղղված հասարակական հարաբերությունները: Տ.Վ. Կոնդրաշովան չի համաձայնում տարածված տեսակետի հետ և իր առարկությունները հիմնավորում է այն հանգամանքով, որ անձի անօգնական վիճակը կարող է պայմանավորված լինել ինչպես հոգեկան, այնպես էլ ֆիզիկական գործոններով: Վերջինս նշում է, որ հոգեկան անօգնական վիճակի պարագայում (մանկահասակություն, հոգեկան հիվանդություն, անգիտակից վիճակ և այլն) խոսքն իհարկե վերաբերում է անձի սեռական անձեռնմխելության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունների պաշտպանությանը: Սակայն ֆիզիկական անօգնական վիճակը (ծերություն, ֆիզիկական թերություններ, հաշմանդամություն և այլն) չի նշանակում, որ անձը չի գիտակցում կամ չի կարող ղեկավարել իր սեռական վարքագիծը: Այս դեպքում սեռական ոտնձգության օբյեկտ պետք է համարել անձի սեռական ազատության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունների համակարգը: Հեղինակը, շարունակելով այս միտքը, նշում է, որ, եթե անձը հոգեպես առողջ է, ապա հիմքեր չկան սահմանափակելու վերջինիս կողմից իր սեռական պահանջմունքները բավարելու եղանակների և միջոցների ընտրությունը: Իհարկե՝ ֆիզիկական անօգնական վիճակը սահմանափակում կամ զրկում է վերջինիս սեռական ագրեսիային դիմադրելու հնարավորությունից, սակայն խոսել նման անձանց մոտ սեռական ազատության իրավունքի բացակայության և բացառապես սեռական անձեռնմխելիության իրավունքի առկայության մասին առնվազն տարօրինակ է և էթիկապես ոչ ճիշտ[41]:

Տեսության մեջ կարծիք է արտահայտվել, որ անչափահասների դեմ ուղղված սեռական հանցագործությունների անմիջական օբյեկտը նրանց բնականոն, նորմալ կամ ստանդարտ սեռական զարգացման ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններն են[42]: Սեռական զարգացման գործընթացը ֆիզիոլոգիական և հոգեբանական բարդ երևույթների համադրություն է: Այն իր մեջ ներառում է բավականաչափ մեծ ժամանակահատված՝ սկսած մարդու ծննդյան պահից, մինչև սեռական հասունացման տարիքը, երբ մարդկային օրգանիզմը, առանց առողջական վնաս կրելու, պատրաստ է նոր սերունդ տալու գործառույթին: Անչափահասների դեմ սեռական հանցագործությունների կատարման պարագայում խախտվում է նրանց բնականոն սեռական զարգացումը: Նրանք դեռ պատրաստ չեն սեռական կյանք վարելուն, առանց օրգանիզմի համար անցանկալի հետևանքների առաջացման: Խնդիրն ավելի է բարդանում անչափահասների դեմ ուղղված բռնի սեռական հանցագործությունների պարագայում, երբ բացի բնականոն սեռական զարգացման ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններից, վտանգվում կամ վնասվում են անձի կյանքի կամ առողջության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունները:

Վաղ սեռական շփումների (հատկապես բռնությամբ զուգորդված) վտանգավորության մասին իր աշխատություններում նշում էր պրոֆեսոր Գ. Մ. Մինկովսկին: Վերջինս փաստում էր, որ նման դեպքերում, բացի առողջությանը պատճառված վնասից (զանազան հիվանդություններ, այդ թվում սեռավարակներ, պաթոլոգիաներ, առողջությանը տարբեր աստիճանի վնասի պատճառում) վտանգվում է նաև անչափահասների հոգեկան առողջությունը, ինչը կարող է հանգեցնել վերջիններիս մոտ անցանկալի սեռական հակումների առաջացման: Մասնավորապես նշվում է, որ այն դեպքերում, երբ անչափահասը անցումային տարիքում (12-15 տարեկանում) դառնում է հոմոսեքսուալ բռնի գործողությունների զոհ, մեծ է հավանականությունը, որ վերջինիս մոտ կառաջանան հոգեսեռական վարքագծի շեղումներ, ինչը հետագայում կհանգեցնի երեխայի մոտ հոմոսեքսուալ հակումների առաջացմանը[43]:

Պետք է փաստել, սակայն, որ անչափահասների նորմալ սեռական զարգացումը չի կարող դիտարկվել որպես երեխաների դեմ ուղղված բռնի սեռական հանցագործությունների բացարձակ ինքնուրույն օբյեկտ: Այն անմիջականորեն փոխկապակցված է երեխաների կյանքի, առողջության, բարոյական և մտավոր զարգացման ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունների հետ, որոնք ըստ էության հանդիսանում են անչափահասների դեմ ուղղված բռնի սեռական հանցագործությունների ինտեգրացված օբյեկտներ:

Ցանկացած հանցագործության հանրային վտանգավորությունը որոշում է հասարակական հարաբերություններին պատճառված վնասի բնույթով և աստիճանով: Անչափահասների և հատկապես մանկահասակների դեմ ուղղված սեռական հանցագործությունների առավել բարձր հանրային վտանգավորությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ հանրավտանգ այս արարքներն ուղղված են անձանց այնպիսի խմբի դեմ, որի բարոյական, սեռական և ընդհանուր ֆիզիկական զարգացումը դեռևս հեռու է ավարտուն լինելուց: Անչափահասների և մանկահասակների դեմ ուղղված սեռական հանցագործությունների պարագայում ֆիզիկական վնասը միշտ զուգակցվում է բարոյահոգեբանական վնասով: Եթե անգամ բռնի սեռական հարաբերության պարագայում երեխայի ֆիզիկական առողջությանը իրական վնաս չի պատճառվում, ապա հոգեբանական վնասը միշտ առկա է: Բացի այդ, վաղ տարիքում ունեցած սեռական փորձը, հատկապես աղջիկների մոտ, առաջ է բերում նրանց սեռական հասունացման տեմպերի արագացման: Սեռական ցանկությունների և սեռական փորձի վաղաժամ ձևավորման վտանգն ակնհայտ է, քանի որ, բացի հոգեբանական լրջագույն վնասից, դա կարող է հանգեցնել վնասակար սեռական սովորությունների և սեռական այլասերումների ձևավորմանը: Այս երևույթների իրական վնասակարությունը կարող է անմիջապես նկատելի չլինել և միայն հետագայում, տարիներ անց, հանգեցնել տվյալ անձի կողմից հանրավտանգ կամ սոցիալապես ոչ ընդունելի վարքագծի դրսևորումներին: Սոցիալապես օգտակար հետաքրքրությունների կորուստը, բարոյականության բացակայությունը, սեփական սեռական կրքերի շրջանակներում պարփակվելը ունակ են ձևավորելու հասարկության համար ոչ պիտանի, իսկ երբեմն էլ վտանգավոր անձի կերպարը:

Այսպիսով՝ բացի սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններից, անչափահասների դեմ ուղղված սեռական հանցագործությունների օբյեկտ են հանդիսանում վերջիններիս բնականոն ֆիզիկական, հոգեկան և բարոյական զարգացման ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունները: Այս է պատճառը, որ ՀՀ քրեական օրենսդրությամբ պատասխանատվություն է սահմանվում ոչ միայն անչափահասների դեմ ուղղված բռնի սեռական հանցագործությունների համար, այլև, որոշ դեպքերում, անգամ կամավոր սեռական հարաբերության համար: Անչափահասների դեմ ուղղված բռնի սեռական հանցագործությունները ավանդաբար դասվում են ամենավտանգավոր և նողկալի հանցագործությունների թվին, քանզի այս դեպքում վտանգվում է ոչ միայն կոնկրետ անձի սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունները, այլև վտանգվում է նոր սերնդի բարոյական, ֆիզիկական և հոգևոր զարգացման ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունների համակարգը: Այս հանցագործությունների պարագայում՝ բարոյական վնասը հաճախ հավասար կամ անգամ ավելի մեծ ծավալ ունենա, քան ֆիզիկական վնասը: Բռնի սեռական հարաբերությունը կամ սեքսուալ բնույթի բռնի գործողությունների կատարումը անձի նկատմամբ, ում վերարտադրողական ձևավորումը դեռևս ավարտված չէ, կարող է պատճառել վերջինիս թե՛ անդառնալի ֆիզիկական վնաս և թե՛ սարսափելի հետք թողնել նրա հոգեկան ներաշխարհում: Այս դատողությունների տրամաբանությունը հանգում է հետևյալին՝ չի կարելի անչափահասների դեմ ուղղված բռնի սեռական հանցագործությունների օբյեկտ համարել բացառապես վերջիններիս սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունները: Անչափահասների բնականոն ֆիզիկական, հոգեկան և բարոյական զարգացման ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունները այս պարագայում չեն կարող դիտարկվել որպես հանցագործության լրացուցիչ օբյեկտ: Վերոշարադրյալն ափոփելով կարծում ենք՝ անհրաժեշտ է ՀՀ քրեական օրենսգրքում նախատեսել «Երեխայի դեմ ուղղված սեռական հանցագործություններ» վերտառությամբ առանձին գլուխ:

[1] Кудрявцев В.Н. Общая теория квалификации преступлений. М.,1999. С. 136.
[2] Фролов Е.А. Механизм уголовно- правовой охраны (основные методологические проблемы). - М.: Наука, 1992. С. 26.
[3] Гаухман Л.Д. Объект преступления: лекция. М., 1992. С. 19.
[4] Трайнин А.Н. Общее учение о составе преступления. - М.: Госюриздат, 1957. С. 124.
[5] Фролов Е.А. Механизм уголовно-правовой охраны (основные методологические проблемы), С. 25-26.
[6] Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս (վեցերորդ հրատարակություն փոփոխություններով և լրացումներով). /Ս. Առաքելյան, Ա. Գաբուզյան, Հ. Խաչիկյան և ուրիշ. – Եր.: ԵՊՀ հրատ., 2012, էջ 114:
[7] Учебник / Под ред. В.Н. Кудрявцева и А.В. Наумова. - М.: Спарк, 1997. С. 91-92.
[8] Уголовное право России. Общая часть: Учебник / Под ред. Н.М. Кропачева, Б.В. Волженкина, В.В. Орехова. - СПб.: Издательский Дом С.-Петерб. гос. ун-та, Изд-во юрид. фак-та С.-Петерб. гос. ун-та, 2006. С. 392.
[9] Курс уголовного права. Общая часть. Том 1: Учение о преступлении: Учебник для вузов / Под ред. Н.Ф. Кузнецовой и И.М. Тяжковой. - М.: И Д «Зерцало-М», 2002. С. 209.
[10] Современное уголовное право. Общая и Особенная части: Учебник / Под ред. проф. А.В. Наумова. - М.: Илекса, 2007. С. 70.
[11] Новоселов Г.П. Актуальные вопросы учения об объекте преступления: методологические аспекты: Автореферат дисс. докт. юрид. наук. - Екатеринбург: УрГЮА, 2001. С. 19.
[12] Новоселов Г.П. Учение об объекте преступления: Методологические аспекты. - М.: НОРМА, 2001. С 112.
[13] Уголовное право Российской Федерации; Общая часть / под ред. Б.В.Здравомыслова. М, 1996. С. 116.
[14] Уголовное право. Общая часть. Изд-е второе, перераб. и дополн. - М.: Юриздат НКЮ СССР, 1939. С. 165.
[15] Курс советского уголовного права (Часть Общая). Том 1.-Л.: Изд-во ЛГУ, 1968. С.291.
[16] Ляпунов Ю.И. Экономическая система СССР как интегрированный объект уголовно-правовой охраны // Уголовно-правовая охрана экономической системы СССР: Сборник трудов Всесоюзного научно- исследовательского института проблем укрепления законности и правопорядка. - М., 1987. С. 17-24.
[17] Уголовное право России. Общая часть: Учебник I Под ред. Н.М. Кропачева, Б.В. Волженкина, В.В. Орехова. - СПб.: Издательский Дом С.-Петерб. гос. ун-та, 2006. С. 396-397
[18] Новоселов Г.П. Учение об объекте преступления. Методологические аспекты. М., 2001. С 78.
[19] Кондрашова Т.В. Проблемы уголовной ответственности за преступления против жизни, здоровья, половой свободы и половой неприкосновенности, С. 271.
[20] Коняхин В. Насильственные действия сексуального характера // Законность. 2005. N 9. С. 7.
[21] Уголовное право России: Учебник для вузов. В 2 т. Т. 2. Особенная часть. Под ред. доктора юридических наук, профессора А. Н. Игнатова и доктора юридических наук, профессора Ю. А. Красикова. - М.: Издательство НОРМА (Издательская группа НОРМА-ИНФРА М), 2000. С 78.
[22] Красиков А.Н. Уголовно-правовая охрана прав и свобод человека в России. - Саратов: СГАП, 1996. С. 149.
[23] Шаргородский М.Д. Ответственность за преступления против личности. - Л.: ЛГУ, 1953. С. 95.
[24] Комментарий к Уголовному кодексу Российской Федерации / Отв. ред. А.И. Бойко. - Ростов н/Д: Изд-во «Феникс», 1996. С. 311.
[25] Советское уголовное право. Часть Особенная / Под ред. М.Д. Шаргородского и Н.А. Беляева. -М., 1962. С. 161.
[26] Пионтковский А.А. Преступления против личности (Уголовное право. Особенная часть). - М.: Юриздат, 1938. С. 223.
[27] Игнатов А.Н. Квалификация половых преступлений. - М.: Юрид. литература, 1974. С. 18.
[28] Рашковская Ш.С. Преступления против жизни, здоровья, свободы и достоинства личности // Советское уголовное право. Часть Особенная. В 13 выпусках / Под общей ред. А.Н. Васильева. Вып. 4. - М.: Госюриздат, 1959. С. 199. Советское уголовное право.
[29] Елешисов Г.Б. Изнасилование как тяжкое преступление против чести и достоинства женщины / Под ред. к.ю.н., доц. Б.С. Бейсснова. - Караганда, 1976. С. 10.
[30] Уголовное право Российской Федерации. Особенная часть: Учебник для студентов, обучающихся по специальности «Юриспруденция». 2-е изд., перераб. и дополн. / Под ред. Б.В. Здравомыслова. - М.: Юристь, 2001. С. 89.
[31] Уголовное право: Учебник для вузов. В 2 т. Т. 2: Особенная часть / Отв. ред-ры И.Я. Козаченко, З.А. Незнамова. - М.: НОРМА - ИНФРА-М, 1997. С. 138.
[32] Уголовное право России (Особенная часть): Учебное пособие / Под ред. В.С. Комиссарова. - М.: Юридический колледж МГУ, 1995. С. 125.
[33] Уголовное право Российской Федерации. Особенная часть. - М., 1996. С. 78.
[34] Уголовное право. Общая и Особенная части: Учебник / Под общ. ред. М.П. Журавлева, С.И. Никулина. - 3-е изд., перераб. и доп. - М.: Норма: НИЦ ИНФРА-М, 2014. С. 511.
[35] Уголовное право России (Общая и Особенная части): Учебник / Под общ. ред. В.П. Ревина. - М.: Брандес, 1998. С. 200.
[36] Աղայան Է.Բ. Արդի հայերենի բացատրական բառարան: «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1976, էջ 84:
[37] Халиков А. Ответственность за посягательства на интересы несовершеннолетних. - Нукус, 1983. С. 24.
[38] Кондрашова Т.В. Проблемы уголовной ответственности за преступления против жизни, здоровья, половой свободы и половой неприкосновенности, С. 271, 273.
[39] Сущенко Ю.К. Об ответственности за развращение несовершеннолетних по УК РСФСР, С. 162.

[40] Осипов П.П. Половая свобода и ее уголовно-правовая охрана в социалистическом обществе // Вопросы охраны прав личности и укрепления социалистической законности. - Саратов: СЮИ, 1966. С. 131.
[41] Кондрашова Т.В. Проблемы уголовной ответственности за преступления против жизни, здоровья, половой свободы и половой неприкосновенности, С. 273.
[42] Курс уголовного права. Особенная часть. Том 3: Учебник для вузов /Под ред. Г.Н. Борзенкова и В.С. Комиссарова. - М.: И Д «Зерцало-М», 2002. С. 258.
[43] Миньковский Г.М. Борьба с преступностью несовершеннолетних в ЧССР // Вопросы криминалистики. 1964. N 12. С. 151.

Эдгар Карапетян
Следственный комитет Республики Армения,
следователь по особенно важным делам следственного отдела
по административным районам Кентрон и Норк-Мараш города Еревана

РЕЗЮМЕ

Объект насильственных половых преступлений против несовершеннолетних

Важнейшее значение для исследования состава преступления имеет уяснение содержания его объекта. Это необходимо для определения характера и степени общественной опасности преступного посягательства. Только на основе тщательного анализа каждого элемента состава преступления, в том числе и объекта, возможна правильная квалификация содеянного.

Проблема объекта насильственных половых преступлений против несовершеннолетних была и остается в теории уголовного права одной из наиболее сложных и дискуссионных. Спектр мнений по этому вопросу многообразен. В статье проанализированы различные доктринальные толкования объекта насильственных половых преступлений против несовершеннолетних, а также на основе исследования предлагается включить новую главу в УК РА- “Половые преступления против детей”.

Ключевые слова *- Насильственные половые преступления против несовершеннолетних, объект преступления, интегрированный объект, социальные отношения, нормальное развитие, нормальное сексуальное, физическое и духовное развитие детей, здоровое половое созревание, нравственное и физическое здоровье детей и подростков, половая свобода и неприкосновенность.*

Edgar Karapetyan
Investigative Committee of the Republic of Armenia,
Investigator on Particularly Important Cases of the Investigative
Division of Kentron and Nork-Marash Administrative
Districts of the Yerevan city

SUMMARY

Object of violent sexual crimes against minors

The object is the central element of the crime. The clarification of the content and definition of object has great importance for research of each crime. This is necessary to determine the nature and degree of the public danger of any criminal activity. Only on the basis of careful analysis of each element of the crime, including the object, the correct qualification of the offense is possible.

The problem of the object of violent sexual crimes against minors has been and remains in the theory of criminal law one of the most complex and controversial. The range of opinions on this issue is diverse. The article analyzes various doctrinal interpretations of the object of violent sexual crimes against minors, and on the basis of the research it is proposed to include a new chapter in the Armenian Criminal Code- “Sexual crimes against children”.

Key words: *Violent sexual crimes against minors, object of crime, integrated object, social relations, normal development, normal sexual, physical and spiritual development of children, healthy puberty, moral and physical health of children and adolescents, sexual freedom and inviolability.*